

Աստուածաշունչ մը (ՄՁ. Թ. 149. նաև Խաչ. Յուգ. տետր ԺԴ. էջ 1040):

ՏՕՆԱՊԵՏ ԿԱՄ ՏՕՆԻԿ ՍԱՍՆՅԻ.— Ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը. իբր քարգնան, վիճիղ քսան տարի ծառայութիւն ըրած է Ս. Աթոռին, Պարոնտէր պտրք.ի օրով. ստացողն եղած է Աւեստանի մը (ՄՁ. Թ. 1945) որուն յիշատակարանէն կը հասկցուի թէ հօրը անունն է Մարուն, մայրը Մարիաւ, և եղբայրը Սարուխան, իր կենսագրութիւնը տեսնել նոյն յիշատակարանին մէջ, ինչպէս նաև Սարաղան (էջ 703): Ս. Յակոբի տուած իր յիշատակներու մասին տեսնել (ՄՁ. Թ. 532):

Տօնապետ Գրիգոր Աբղալի հետ 1658ին կը գնէ Ս. Փրկչի վանքին հանդէպ գտնուած արտը՝ հայոց գերեզմանատան յատկացնելու համար (ՄՁ. Թ. 322):

